ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 23 դեկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Զ.Ղուկասյանի
Կ. Բալայանի

Քննության առնելով քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. Քաղ. Ռուբեն Թորոսյանը դիմել է սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 6-րդ մասի սահմանադրականությունը:

Դիմողի կողմից վիճարկվող դրույթը կիրառված է թիվ ՎԴ/1928/05/08 վարչական գործով կայացված դատական ակտերով: Հիշյալ գործով վճիռը կայացվել է «ՀՀ Նախագահի 2008թ. փետրվարի 19-ի ընտրությունների արդյունքների ամփոփման սահմանված կարգի խախտմամբ ԿԸՀ գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու մասին» հայցադիմումի առնչությամբ:

2. Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 27 հոդվածի՝ թեկնածուի վստահված անձը կոչված է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների հետ փոխհարաբերություններում ներկայացնելու թեկնածուի շահերը: Նշված հայցադիմումի բնույթն ու բովանդակությունը, ինչպես նաեւ դրա առնչությամբ կայացված դատական ակտերը վկայում են, որ վերոհիշյալ վարչական գործի շրջանակներում վստահված անձ Ռ. Թորոսյանը հանդես է եկել ոչ թե իր՝ որպես քաղաքացու կամ վստահված անձի շահերի պաշտպանությամբ, այլ ՀՀ Նախագահի

թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի շահերի, մասնավորապես, նրա ընտրվելու իրավունքի պաշտպանությամբ: Հետեւաբար, այդ վարչական գործով կայացված դատական ակտերը վերաբերում են Լ. Տեր-Պետրոսյանի իրավունքներին ու շահերին եւ իրավական հետեւանքներ են առաջացնում նրա, եւ ոչ թե քաղ. Ռ. Թորոսյանի համար: Ուստի նշված հայցադիմումի հիման վրա հարուցված վարչական գործի առնչությամբ կայացված դատական ակտերով կիրառված դրույթների սահմանադրականությունը չի կարող վիճարկվել քաղ. Ռ. Թորոսյանի կողմից քանի որ նշված դրույթները նրա նկատմամբ չեն կիրառվել:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն գործի քննությունը մերժվում է, եթե դիմողն իրավասու չէ դիմելու սահմանադրական դատարան:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով՝ Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

Քաղ. Ռ. Թորոսյանի դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻ ՐՈՒԹՅՈՒՆ